ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 փետրվարի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

25
(2875)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՂԱԶԱՐՅԱՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՈՒՆԵՑՎԱԾՔ ԴԻԶԵԼ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

NN ը/կ	Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները	
1.	Անունը, ազգանունը, հայրանունը	ՀՈՎՍԵՓ ԱՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎԻԿԻ
2.	Ծննդյան օր, ամիս, տարի	06/07/1991
3.	Հանրային ծառայությունների համարանիշ	Պաշտպանված
4.	Հաշվառման հասցե	Պաշտպանված
5.	Փաստացի բնակության հասցե (եթե տարբերվում է հաշվառման հասցեից)	Պաշտպանված
6.	Մարմնի անվանումը, որտեղ պաշտոն է զբաղեցնում	Երևանի քաղաքապետարան
7.	Զբաղեցրած պաշտոնը	Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ
8.	Պաշտոնն դադարեցնելու օրը, ամիսը, տարին	01/12/2023
9.	Էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամարներ	Պաշտպանված, Պաշտպանված
10.	Հայտարարագրի ներկայացման օրը, ամիսը, տարին	20/02/2024

Hovsep Aghazaryan

Բ.2.1 Տրանսպորտի միջոց

Հայտարարատու սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը	Տրանսպորտի միջոցի տեսակը	Մակնիշը, սերիան	Թողարկման տարին	Նույնականացման համարը	Տրանսպորտի միջոցը ձեռք բերելու տարին	Տրանսպորտի միջոցը ձեռքբերելու եղանակը
ՀՈՎՍԵՓ ԱՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎԻԿԻ	Մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոց	CHRYSLER Պաշտպանված	2016	Պաշտպանված	09/06/2023	Գնում

«Ժողովուրդ» օրաթերթը նկատել էր, որ Հովիկ Աղազարյանի որդին՝ Հովսեփ Աղազարյանը, պաշտոնը դադարեցնելու մասին հայտարարագիր չի ներկայացրել: Փորձեցինք հենց նրանից տեղեկանալ պատճառների մասին, սակայն Հովսեփ Աղազարյանը մեր զանգերին չպատասխանեց: Նախկին փոխթաղապետի հայրը՝ Հովիկ Աղազարյանը, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց, որ որդին աշխատանքի է անցել էկոնոմիկայի նախարարության վարչություններից մեկում որպես խորհրդական:

Հովսեփ Աղազարյանը որոշել է 2016 թվականի արտադրության CHRYSLER վարել, որը ձեռք է բերել 2023 թվականին: Մինչ այդ էլ Աղազարյանը 2020 թվականին բնակարան էր ձեռք բերել հիփոթեքով, որի մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ կազմել է 20 մլն 702 հազար դրամ:

Հովիկ Աղազարյանի նախկին փոխթաղապետ որդին պաշտոնի դադարեցման հայտարարագիրը ներկայացրեց օրերս՝ պահանջվող ժամկետից 2 ամիս ուշ: Ի դեպ, կրտսեր Աղազարյանի ֆեյսբուքյան գլխավոր էջը, հեղափոխության առաջնորդի լուսանկարի փոխարեն, այժմ զարդարում է Մարկ Տվենի մի գրառում: Ըստ երեւույթին նրանք նեղացած են Նիկոլ Փաշինյանից, քանի որ որդին չնշանակվեց Նոր Նորքի թաղապետ, փոխարենն ազատվեց պաշտոնից, սակայն, անկասկած, ՔՊ օրոք ծաղկող խնամի-ծանոթ-բարեկամ կապը չի թողնի «տաշած» իշխանավորը գետնին մնա:

Ստացվում է, որ իշխանության ներկայացուցիչները շարունակում են դիզել ունեցվածք՝ անշարժ գույք, մեքենա:

Կրտսեր Աղազարյանը շտապել է նաեւ կարեկցանք հայտնել Վահան Քերոբյանին՝ ամրապնդելով ՔՊ վարքի նոր՝ կոռուպցիոն ռասիզմի տեսությունը, այն է՝ նախկին թալանչին թալանչի է, ներկա թալանչին՝ մանկահասակ երեխայի մայր:

Շաբաթ օրը հայտնի դարձավ, որ «Քաղաքացիական պայմանագիր»-ը վարչության նիստ է արել ու որոշել էկոնոմիկայի նախարարի պաշտոնում առաջադրել ՔՊ-ական պատգամավոր Գեւորգ Պապոյանի թեկնածությունը: «Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել այդ նիստից: Նախ տեղեկացանք, որ, բացի Պապոյանից, այլ թեկնածուներ էլ են քննարկվել նիստին, այդ թվում՝ պատգամավոր Բաբկեն Թունյանը. վերջինս, սակայն, հենց սկզբից հրաժարվել է ու չի ցանկացել առաջադրվել նախարարի պաշտոնում: Նիկոլ Փաշինյանն ի սկզբանե տրամադրված չի եղել պատգամավորներից մեկին տանել գործադիր, բայց նրա կադրային բանկն այնքան աղքատիկ է, որ այլ համապատասխան թեկնածու չի գտել: Պապոյանի թեկնածությունը դնելու հարցը, կարելի է ասել, վերջին պահին՝ հենց վարչության նիստին է որոշվել: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, Պապոյանի թեկնածությունը վարչության նիստին միանշանակ է ընդունվել՝ բոլոր անդամների կողմ քվեարկությամբ: Նրա փոխարեն ԱԺ կմտնի Դավիթ Կարապետյանը՝ Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավարը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դատավոր Արշակ Վարդանյանի անակնկալ հրաժարականը նախապատմություն է ունեցել: Դատական համակարգից մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Արշակ Վարդանյանի հրաժարականին դեռ շատ գործընթացներ են հետեւելու, իսկ թե ինչ, դժվար չէ կանխատեսել: Անակնկալ հրաժարականի պատճառը, ըստ մեզ հասած տեղեկությունների, շպիոնաժն է եղել: Լրտեսել են դատավոր Վարդանյանին, ինչն էլ պատճառ է դարձել, որ Վարդանյանը դիմում գրի, ավարտի դատավորի կարիերան: Մեզ լուրեր հասան, որ Արշակ Վարդանյանի հրաժարականով ամեն ինչ չի ավարտվելու, դեռ շատ խմորումներ են սպասվում դատական համակարգում: Նշենք, որ երեկ, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, սեփական դիմումի հիման վրա՝ դադարել են Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արշակ Վարդանյանի լիազորությունները: Հավելենք, որ Դատական օրենսգրքով Արշակ Վարդանյանի լիազորությունները դադարում են եւ Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում, եւ դատավորի:

«Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ-ի եւ ՍԴ դատավորի թեկնածու Դավիթ Բալայանի հետ հանդիպումից: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ականները բավականին ակտիվ են եղել: Մասնավորապես, փակ հանդիպմանը կոնկրետ ՍԴ դատավորի թեկնածուին 6-ից ավելի հարց է տվել Անդրանիկ Քոչարյանը, որից հետո հարցեր են տվել Վլադիմիր Վարդանյանը, Տրդատ Սարգսյանը, Լիլի Մինասյանը, Հայկ Կոնջորյանը: Վերջիններիս հարցերը եղել են ինչպես նրա կրթությունից, այնպես էլ նրա գործունեությունից: Ի դեպ, ըստ ՔՊ-ականների, առավել սուր հարցեր է տվել Անդրանիկ Քոչարյանը, որի հարցերին Բալայանը բավականին հանգամանալից պատասխաններ է տվել: ArmLur.am-ը գրել էր, որ Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու Դավիթ Բալայանը հանդիպել է ԱԺ խմբակցությունների պատգամավորների հետ: Բալայանը մեզ հետ զրույցում հաստատեց տեղեկությունը, սակայն չցանկացավ որեւէ բան մանրամասնել: Ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ ՔՊ խմբակցության հետ հանդիպումը շատ ակտիվ է եղել, որի ժամանակ պատգամավորները տարբեր հարցեր են հղել Բալայանին: Հիշեցնենք, որ ՍԴ դատավոր դառնալու համար դիմել էր Երեւան քաղաքի դատավոր Դավիթ Բալայանը եւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատուրյանը, որը մի քանի ամիս առաջ էր ԲԴԽ-ից գնացել ու ԱԺ-ում ընտրվել էր Վճռաբեկ դատարանի դատավոր: Դատավորները 158 ձայն տվեցին Դավիթ Բալայանին: Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանը հրաժարական տվեց, եւ ԱԺ-ն, հիմք ընդունելով հրաժարականի մասին դիմումը եւ առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, 2024 թվականի հունվարի 4-ից դադարած համարեց Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանի լիազորությունները: Նշենք, որ Թունյանն ընտրվել է Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր եւ այդ պատճառով հրաժարական տվեց ՍԴ դատավորի պաշտոնից:

ԶՐՈՒՅՑ

«ՍԱ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Է»

«Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը ArmLur.am-ի հետ զրույցում անդրադարձել է տրանսպորտի ուղեվարձի թանկացմանը՝ նշելով, որ եթե իսկապես թանկանա տրանսպորտի վճարը, ապա իրենք փողոցային ակցիաներ են սկսելու:

-Պարոն Թեւանյան, քաղաքային իշխանությունները մտադիր են թանկացնել տրանսպորտի ուղեվարձը, ընդ որում՝ կտրուկ: Կարծես հանրային դժգոհություններից հետո մտադիր են որոշակի զիջումների գնալ. հիմա նախագիծը քննարկման փուլում է, առաջիկայում կրկին ներկայացվելու է ավագանու նիստին: Այս մասին ի՞նչ կասեք, ի՞նչ փոփոխությունների, ըստ Ձեզ, նախագիծը կենթարկվի:

-Քաղաքային իշխանությունները ձեւավորվել են կուլիսային, ստվերային, որ լեգիտիմ տարբերակով, որովհետեւ սա փոքրամասնության իշխանություն է, եւ անընդհատ թանկացումների է գնում՝ տեղական տուրքերը ավելացնել, կարմիր կետագծերով ավտոկայանատեղիները թանկացնել, հիմա էլ անցել են տրանսպորտին: Մենք արդեն ապացուցել ենք իրենց իսկ տված թվերով, որ իրենք ստում են, երբ ասում են, որ ինքնարժեքը 200-230 դրամ է ավտոբուսի համար: Մենք իրենց թվերով ապացուցել ենք, որ դա 130-ից ավելի չէ: Իրենք ակնհայտորեն հետապնդում են գերշահույթներ՝ տրանսպորտի գինը թանկացնելով: Այո՛, իրենք վախեցան հանրային դժգոհությունից, կես քայլ արեցին. իրենք ուզում են նոր օրինագիծ մտցնել, որտեղ կոսմետիկ փոփոխություններ են լինելու, եւ մինչեւ 260 դրամ ավտոբուսի ուղեվարձը թանկացնելը կարող է մեկ կամ երկու տոկոսով իջնել, բայց մեծ հաշվով թանկացումը մնալու է:

-Այսինքն՝ որոշակի մեղմացումներ կլինեն:

- Մեղմացումները գիտեք ո՞րն է. ոնց որ մարդուն տանես գնդակահարության, եւ գնդակահարությունից առաջ որոշես ծեծել, հետո նոր գնդակահարել, հետո հայտարարում ես, որ, դե լավ, գնդակահարությունից առաջ չենք ծեծի, եւ դա համարվում է հումանիզմ. ի վերջո, գնդակահարելու են, ի վերջո, թանկացնելու են: Իրենք էլ ժամանակին, իբր, պայքարում էին թանկացումների դեմ: Հիմա մենք մեր առաջարկն ենք ներկայացրել, որով առաջարկում ենք, որ գինը մնա նույնը, թոշակառուների, 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամների համար տրանսպորտը լինի անվճար, իսկ նրանք, որոնք չորսից ավելի անգամ են օգտվում տրանսպորտից օրվա մեջ, մենք առաջարկում ենք աբոնեմենտ, որն ավելի էժան կդառնա, քան 100 դրամը: Այս դեպքում քաղաքացին նախապես է վճարելու 1 օրվա, 7 օրվա, 1 ամսվա կամ 1 տարվա համար, այդ միջոցները կուտակվելու են տրանսպորտային համակարգի մեջ եւ ցիրկուլացիա են ապահովելու, որովհետեւ մարդն այսօր վճարելու է եւ մեկ տարվա ընթացքում նոր սպառելու է: Իրենք առաջարկում են 110 000 դրամ տարեկան, մենք առաջարկում ենք նույնը 35000 դրամ, որը համարժեք է Թբիլիսիի գներին: Եթե Թբիլիսիում դա հնարավոր է դարձել, մեզ մոտ էլ կդառնա: Եթե ասում են՝մենք չունենք այդ հնարավորությունը, ուրեմն կա հասկացություն, կոչվում է սուբսիդիա կամ լրավճար, որը պետք է արվի եւ՛ տեղական, եւ՛ պետական բյուջեից, որովհետեւ Հայաստանը սոցիալական պետություն է հռչակված, եւ տրանսպորտի ոլորտը հատկապես սոցիալական լայն ընդգրկում ունի: Հազար ու մի ուղղություն կա, որտեղից կարելի է գտնել այդ միջոցները. այդ իրենց անիմաստ թանկարժեք ծախսերը, կեղծ երդման արարողությունները, մեկ անձից գնումները՝կոռուպցիոն ռիսկերով, պարգեւավճարները. սրանք բոլորը հնարավորություն են տալիս այդ միջոցները ուղղել այն փաթեթին, որը մենք ենք ներկայացնում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

ԷԼԻ ՏՈՒԺԵԼՈՒ Է ՍՈՎՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ

«Քաղաքացու բարեկեցության խոստումներով իշխանության եկածները շատ կարճ ժամանակահատվածում որոշեցին, որ քաղաքացին իր բարեկեցությունը պետք է աղահովի օրեցօր բարձրացող հարկերի, տուրքերի ու վճարումների հաշվին: Մի կողմից՝ պետք է վճարի բարձր հարկերը, մյուս կողմից՝ բարեկեցիկ լինի»,- իր հոդվածում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ, ԱԺ պատգամավոր Էլինար Վարդանյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Խոպանչիների հետաձգված հարկը միակը չէր: Վերջին մի քանի տարիների ընթացքում էապես բարձրացել են հարկերը, տուրքերն ու վճարները: Առաջիկայում եւս սպասվում են հարկային նոր փոփոխություններ:

2023թ. հուլիսի 1-ից նոր կարգով են հարկվում միկրոձեռնարկատիրության սուբյեկտները: Հարկը հաշվարկվում է վճարվող աշխատավարձի 20 տոկոսի չափով: Այսինքն՝ մեկ աշխատողի համար միկրոձեռնարկատիրության դեպքում ոչ թե հաստատուն 5 հազար դրամի չափով է եկամտային հարկ վճարվում, այլ գործատուն վճարում է 20 տոկոս եկամտահարկ: Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի նպատակն էր փոքր տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծել հարկման հարմարավետ եւ պարզ պայմաններ, արդյունքում միկրոով աշխատելը դարձել է շատ բարդ եւ ոչ ցանկալի:

Հաջորդ տարվանից ամբողջական ծավալով կգործի գույքահարկի մասին օրենքը: Մեր քաղաքացիները կզգան գույքահարկի վերջնական բեռը: Իշխանություններն օրենքն ընդունելիս դիմեցին սանդղակով անցում կատարելու լավ մտածված մեթոդին, որպեսզի գույքահարկի վերջնական բարձր դրույքաչափերին անցումը անցնցում լինի: 2025թ. ֆինանսական մեծ բեռ է առաջանալու այն մարդկանց համար, ովքեր անշարժ գույք ձեռք են բերել տասնհինգ-քսան տարի առաջ, երբ գույքի շուկայական արժեքը անհամեմատ ցածր էր, ստացել են որպես ժառանգություն, գույքը բաժին է հասել Խորհրդային Միության շրջանից եւ ունեն ցածր եկամուտ:

Երեւանում կտրուկ բարձրացել են շինթույլտվությունների տեղական տուրքերի եւ վճարների դրույքաչափերը: Կառուցապատող ընկերություններն արդեն նախազգուշացնում են, որ նորակառույց շենքերի առանց այն էլ ոչ մատչելի, բնակարանների գները 10-15 տոկոսով կբարձրանան: Տուժելու են եւ՛ կառուցապատողները, եւ՛ բնակարան ձեռք բերող քաղաքացիները: 2024թ-ի սեպտեմբերից հավելյալ պետական տուրք են վճարելու տաքսու վարորդները: Առցանց պատվիրված յուրաքանչյուր տաքսի-փոխադրման համար կգանձվի վճար, որը մինչեւ 2026թ. կհասնի 5 տոկոսի: Պահանջվելու է նաեւ տաքսիներում ՀԴՄ-ներ ունենալ եւ էլեկտրոնային կտրոն տրամադրել: Սա կարող է ազդել նաեւ տաքսու գների բարձրացման վրա:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է փաստաբանական եւ նոտարական ծառայությունների մատուցումից առաջացող շրջանառության հարկը 2024 թ. հոկտեմբերի 1-ից դարձնել 10 տոկոս՝ ներկայիս 5 տոկոսի փոխարեն, իսկ արդեն 2025 թ. հունվարի 1-ից բացառել գործունեության այս տեսակները շրջանառության հարկի համակարգում: Ի՞նչ հետանքներ կարող է ունենալ այս որոշումը. մարզերում տարեկան ընդամենը մի քանի տասնյակ գործարք անող նոտարական գրասենյակները պարզապես կփակվեն, իսկ փաստաբանական ծառայությունների արժեքը կբարձրանա: Իհարկե էլի տուժելու է սովորական քաղաքացին:

Բայց այստեղ նշմարվում է նաեւ թաքնված դրդապատճառ՝ պատժել փաստաբանական հանրույթին, որը հակադրվում է իշխանության իրավական կամայականություններին»:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՓԱԿ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ

Խորհրդարանում երեկ տեղի է ունեցել Նիկոլ Փաշինյանի եւ իշխանական պատգամավորների փակ հանդիպումը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հանդիպումը 3 ժամից ավել է տեւել: Նիկոլ Փաշինյանը նախ ներկայացրել է մյունխենյան բանակցությունների արդյունքները, մասնավորապես՝ Ադրբեջանի նախագահի հետ ունեցած հանդիպումը:

Ըստ էության, Փաշինյանը թիմակիցներին ակնարկել է, որ առանձնապես մեծ առաջընթաց չկա բանակցային գործընթացում, մյունխենյան հանդիպումն էլ հերթական հանդիպումն էր, ու կարեւոր պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել:

Փաշինյանի ելույթից հետո ՔՊ-ականները հարցեր են ուղղել նրան:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը ընդունել է Համաշխարհային բանկի (ՀԲ) ներկայացուցիչներին՝ ՀԲ Հայաստանի գրասենյակի տնօրեն Կարոլին Գեգինատի գլխավորությամբ: Այս մասին տեղեկացնում են ԲՏԱ նախարարությունից:

Հանդիպման ընթացքում քննարկվել են «Առեւտրի խթանում եւ որակի ենթակառուցվածքներ» (ԱԽՈԵ) ծրագրի ամփոփման եւ նոր ծրագրեր նախաձեռնելու հեռանկարները:

Նախարարը ողջունել է հյուրերին, կարեւորել ԲՏԱ նախարարության եւ Համաշխարհային բանկի միջեւ ձեւավորված գործընկերությունը, ներկայացրել նախարարության գործունեության առաջնահերթ ուղղությունները:

Մխիթար Հայրապետյանը խոսել է տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի զարգացմանն ուղղված նոր օրենսդրական փաթեթի մշակման մասին, ներկայացրել մանրամասներ SS համայնքի հետ անցկացվող քննարկումների, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման գործընթացի վերաբերյալ:

Կարոլին Գեգինատը շնորհավորել է Մխիթար Հայրապետյանին նախարարի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, խոսել ԱԽՈԵ-ի կատարման ընթացքի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության գործընկերների հետ ձեւավորված արդյունավետ համագործակցության մասին: Կարոլին Գեգինատը նաեւ իր տեսակետն է հայտնել Հայաստանում ՏՀՏ ոլորտի տպավորիչ զարգացման եւ աշխատաշուկայի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ: Անդրադարձ է եղել նաեւ Հայաստանում թվայնացման գործընթացին եւ նախարարության առաջատար դերակատարմանը, արհեստական բանականության գործիքների կիրառմանը, ստարտափ էկոհամակարգին, կրթական ծրագրերին:

Նշված համատեքստում նախարարն ընդգծել է, որ հետազոտությունը եւ զարգացումը (R&D) նախարարության առաջնահերթ ուղղություններից է:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՊՈՅԱՆԸ՝ ՆԱԽԱՐԱՐ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանը հայտարարեց պատգամավորական մանդատը վայր դնելու մասին եւ անդրադարձել է էկոնոմիկայի նախարարի պաշտոնում իր նախատեսվող նշանակմանը: Լրագրողների հետ ճեպազրույցում Պապոյանն ասաց, որ էկոնոմիկայի նախարարությունն ամենամեծ կառույցներից մեկն է, եւ շատ դժվար է լինելու:

«Մենք գործ ունենք տնտեսության հետ, մենք գործ ունենք տարբեր ոլորտների հետ, որտեղ բազմաթիվ խնդիրներ կան՝ նաեւ աշխարհաքաղաքական զարգացումների տեսանկյունից»,-ասաց Պապոյանը:

Նա նշեց, որ փետրվարի 26-ին պատգամավորական իր մանդատը վայր է դրել:

«Ինչպես գիտեք, ըստ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ ԱԺ պատգամավորին տալիս է 7-օրյա ժամկետ, ես այսօր մանդատս վայր եմ դրել: Ենթադրում եմ, որ Ազգային ժողովի նախագահն այսօր համապատասխան հայտարարություն կանի: Երբ մանդատս պաշտոնապես վայր դրած կլինեմ, բնականաբար, այդ պահից հետո հնարավոր կլինի նշանակումը կատարել»,-եզրափակեց Պապոյանը:

Փետրվարի 24-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությունը քննարկել եւ հավանության է արժանացրել Գեւորգ Պապոյանի թեկնածությունը էկոնոմիկայի նախարարի պաշտոնում:

Գեւորգ Պապոյանը Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է:

Փետրվարի 14-ին Վահան Քերոբյանը հայտնեց էկոնոմիկայի նախարարի պաշտոնից ազատման մասին: Փետրվարի 15-ին հայտնի դարձավ, որ Վահան Քերոբյանին մեղադրանք է առաջադրվել պաշտոնական լիազորությունները չարաշահելու հոդվածով՝ «Սիներջի» ընկերության հետ կապված գործով: Փետրվարի 16-ին դատարանը որոշեց Քերոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել տնային կալանքը:

ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԻՐԱՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը պաշտոնական այցով ժամանել է Իրաք:

Բաղդադի միջազգային օդանավակայանում ՀՀ նախագահին դիմավորեց Իրաքի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Ֆուադ Հուսեյնը:

Այցի շրջանակներում ՀՀ նախագահը հանդիպումներ կունենա Իրաքի նախագահ Աբդուլ Լատիֆ Ռաշիդի, վարչապետ Մուհամեդ Շիա-Ալ Սուդանիի հետ:

ՀՀ նախագահն այցի ընթացքում դասախոսությամբ հանդես կգա Բաղդադի համալսարանում: Կայցելի նաեւ Էրբիլ, որտեղ հանդիպումներ կունենա Իրաքյան Քուրդիստանի շրջանի պատվավոր նախագահ Մասուդ Բարզանիի եւ Իրաքյան Քուրդիստանի շրջանի նախագահ Նեչիվան Բարզանիի հետ: Վահագն Խաչատուրյանը հանդիպումներ կունենա նաեւ Իրաքի եւ Իրաքյան Քուրդիստանի հայկական համայնքների ներկայացուցիչների հետ: ՀՀ նախագահի պատվիրակության կազմում Իրաք են ժամանել նաեւ գործարարներ, որոնք կմասնակցեն գործարար համաժողովի:

ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏ

ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

«Ներքին գործերի նախարարությունում 2023 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ» Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունը քննարկելու նպատակով փետրվարի 26-ին Ֆինանսավարկային եւ բյուջետային ու Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովները համատեղ նիստ էին հրավիրել:

ԱԺ-ից հայտնում են, որ նիստը վարել են Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը եւ Ֆինանսավարկային ու բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանը:

Հաշվեքննիչ պալատի (ՀՊ) անդամ Կարեն Կարապետյանը նշել է, որ 2023 թվականի երեք, վեց ու ինն ամիսների կտրվածքով ընդհանուր առմամբ Ներքին գործերի նախարարությանը ներկայացվել է 65 անհամապատասխանություն եւ դրանց վերացման նպատակով 22 առաջարկ: Դրանցից 12-ը հաշվեքննության օբյեկտի կողմից ամբողջությամբ ընդունվել են, դրանք վերացնելու նպատակով համապատասխան միջոցներ են ձեռնարկվել, իսկ 4-ը չեն ընդունվել, 6-ի մասով դեռեւս տեղեկատվություն չի ներկայացվել, քանի որ սահմանված վերջնաժամկետը չի լրացել: ՀՊ անդամն անդրադարձել է պարեկային ծառայության կարիքների համար ավտոմեքենաների ձեռք բերման պայմանագրին: ՆԳ նախարարությունը 2023 թվականին համապատասխան ընկերության հետ կնքել է 65 ավտոմեքենայի գնման պայմանագիր: Նշվել է, որ արտադրողի կայքի տվյալների ուսումնասիրման արդյունքում անհամապատասխանություն է արձանագրվել արտադրողի եւ մատակարարի առաջարկած մեքենաների թափքերի միջեւ, տեխնիկական չափորոշիչների, անվադողերի անհամապատասխանություններ են հայտնաբերվել:

ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանը, չժխտելով գնումների գործընթացում առկա խնդիրները, ընդգծել է, որ դրանց գերակշիռ մասը տեխնիկական բնույթի են եւ հետեւանքներ չեն առաջացրել:

Բարձրաձայնելով ընկերության պաշտոնական ներկայացուցչի պարզաբանումներն ավտոմեքենաների ձեռք բերման մասով՝ նա փաստել է, որ այն պնդումը, որ մեկ շեղումը կարող է բացասական հետեւանքներ ունենալ, հիմքեր չունի: «Նույնկերպ ես կարող եմ պնդել, որ այդ շեղումն ավելի դրական է, քանի որ ավելի քիչ վառելիք է ծախսվում»,- ասել է Արա Ֆիդանյանը: ՀՊ նախագահ Ատոմ Ջանջուղազյանը հիշեցրել է, որ անհամապատասխանությունն արձանագրված է պայմանագրի պահանջների նկատմամբ: Գեւորգ Պապոյանն արձանագրել է՝ Հաշվեքննիչ պալատն առաջարկում է նմանատիպ իրավիճակներում առաջնորդվել սահմանված չափորոշչով:

Հաջորդ արձանագրումը վերաբերել է ջրային պարեկների կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռք բերմանը: 2023 թվականի հունիսին ՆԳՆ ոստիկանության կողմից ջրային պարեկների կարիքների համար համակարգչային պլանշետ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է աճուրդ, որին մասնակցել է երկու ընկերություն: Կարեն Կարապետյանն արձանագրել է, որ ոստիկանությանը մատակարարվել է մեկ պլանշետը 393,99 հազար դրամով՝ չնայած այն հանգամանքին, որ մատակարարող ընկերությանը պատկանող էլեկտրոնիկայի խանութում նույն պլանշետը վաճառվել է 286,90 հազար դրամ մանրածախ արժեքով: 40 պլանշետի պարագայում տարբերությունը շուրջ 4,250.0 հազար դրամ է եղել: ՆԳՆ տեղեկատվական տեխնոլոգիաների եւ կապի վարչության պետ Արթուր Ափյանը տեղեկացրել է, որ տվյալ ընկերության պարզաբանմամբ գործարանային վերանորոգման արդյունքում 2-3 պլանշետ գովազդի նպատակով վաճառվել է ինքնարժեքից էժան գնով:

Ապակիների լուսաթափանցելիությունը չափող միջոցների ձեռք բերման պայմանագրի մասով, ըստ Կարեն Կարապետյանի, ստանդարտացման կտրվածքով եւ «Գնումների մասին» օրենքով, ստուգաչափման մասով եղել են անհամապատասխանություններ: Անդրադարձ է եղել կարիքի ձեւավորման խնդիրներին, նշվել է, որ կարիքը ձեւավորվել է շատ մոտավոր: Գնումների ու ֆինանսական գործընթացները կազմակերպող մասնագետների պատասխանատվությանը վերաբերող հարցին ի պատասխան՝ Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը տեղեկացրել է, որ իր հանձնարարականով կանցկացվի ծառայողական քննություն եւ դրանից հետո կլինեն հաջորդող քայլեր:

Քննարկման ընթացքում բարձրաձայնվել են մի շարք խնդիրներ, անդրադարձ է եղել դրանց գնումների կազմակերպման ընթացակարգերին, վեր են հանվել գնումների օրենսդրությունում նոր կարգավորումներ պահանջող մի շարք հարցեր:

«Այն, ինչ որպես անհամապատասխանություն արձանագրված է, թույլ է տալիս ենթադրել, որ գնման ընթացակարգն ավելի լավ է կազմակերպվում, քան առարկան նկարագրվում է»,- ասել է Ատոմ Ջանջուղազյանն ու հավելել, որ անհամապատասխանությունների բովանդակությունը հիմնականում առարկայի նկարագրությունից շեղումներին է վերաբերում, ոչ թե գնման ընթացակարգի կազմակերպմանը: «Գնման առարկայի նկարագրության մասով մեր ստորաբաժանումներն անելիք ունեն»,- նման կարծիք է հայտնել ՀՊ նախագահը:

Անդրանիկ Քոչարյանը եւ Գեւորգ Պապոյանը, կարեւորելով նման գործընկերային քննարկումները, համոզմունք են հայտնել, որ դրանց արդյունքում է, որ պետք է շտկվեն եղած թերությունները:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՊԿ

ԿՇՓՎԵՆՔ, ԿՊԱՐԶԱԲԱՆԵՆՔ

Մոսկվան շարունակում է շփումները Երեւանի հետ՝ պարզաբանելու Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները ՀԱՊԿ-ի աշխատանքներին մասնակցությունը սառեցնելու մասին:

Այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: Կրեմլի ներկայացուցիչը նշել է, որ Ռուսաստանի մոտ «դեռ չի հայտնվել» Հայաստանի դիրքորոշման ըմբռնում:

«Եթե հաշվի առնենք համապատասխան փաստաթղթերի տեքստը, ապա նման ռեժիմ պարզապես դե յուրե գոյություն չունի, - Պեսկովի խոսքերն է մեջբերում ՏԱՍՍ-ը: - Մենք բավականին հաճախակի շփումներ ունենք մեր հայ գործընկերների հետ: Իհարկե, մենք կշփվենք, դա կպարզաբանենք»:

France 24-ին տված հարցազրույցում Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնել էր, որ Հայաստանը գործնականում սառեցրել է իր մասնակցությունը ՀԱՊԿ-ի աշխատանքներին՝ մասնավորապես նշելով, որ ՀԱՊԿ-ը չի կատարել անվտանգային ոլորտի պարտավորությունները Հայաստանի նկատմամբ:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏԱՔ ՀԵՏՔԵՐՈՎ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության քրեական հետախուզության բաժնի (վարչության պետ՝ Արթուր Մկրտչյան, վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ՝ Սեւակ Բաղիրյան) եւ համայնքային ոստիկանության բաժանմունքների ծառայողները՝ բաժնի պետ Արթուր Լոբյանի գլխավորությամբ, հերթական բնակարանային գողության դեպքն են բացահայտել թարմ հետքերով: Տավուշի մարզի ոստիկանները ոչ միայն կարողանում են թարմ հետքերով անձնական ունեցվածքի գողության դեպքեր բացահայտել, այլ նաեւ բազմիցս իրենց օպերատիվ աշխատանքի շնորհիվ կանխել են գողություններ կատարելու դեպքեր:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, փետրվարի 24-ին ոստիկանության Տավուշի բաժին է դիմել Երեւանում բնակվող 61-ամյա Շաքար Ե.-ն եւ հայտնել, որ փետրվար ամսվա առաջին օրերին անհայտ անձը կամ անձինք, օգտվելով իր՝ տանը չբնակվելու հանգամանքից, մտել են Մովսես գյուղում գտնվող իր տուն եւ կատարել գողություն:

Դեպքի վայր են ժամանել ոստիկանության Տավուշի մարզային վարչության օպերատիվ խումբը՝ վարչության պետ Ա. Մկրտչյանի, վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Ս. Բաղիրյանի եւ ոստիկանության Տավուշի բաժնի պետ Ա. Լոբյանի գլխավորությամբ:

Դեպքի վայր են ժամանել նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Տավուշի մարզի գումարտակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Լեւոն Մարտիրոսյանի գլխավորությամբ:

Ահազանգով ժամանել են նաեւ Հայաստանի քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Բերդի քննչական բաժնի խումբը, որտեղ գողության փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Մինչ քրեագետը դեպքի վայրում աշխատանքներ էր կատարում, Տավուշի մարզի ոստիկանները տաք հետքերով պարզում են դեպքի որոշ հանգամանքներ եւ գողություն կատարելու կասկածանքով ոստիկանության Տավուշի բաժին են բերման ենթարկում Տավուշի մարզի բնակիչներ 23-ամյա Արմեն Ա.-ին եւ 35-ամյա Աշոտ Ա.-ին:

Վերջիններս խոստովանում են, որ իրենք են մտել նշված տուն, տանը կից շինության պատուհանին դրված քարի տակից վերցրել են նկուղի բանալիները, ապա մտել առաջին հարկի նկուղ եւ այնտեղից գողացել տարբեր տարողությամբ շուրջ 230 լիտր օղի, 1 հատ բենզինով աշխատող սղոց, 25 հատ մսի պահածոներ, 1 հատ այրիչ (գարելկա), խոհանոցային դանակների հավաքածու, երկրորդ նկուղից գողացել են տեսաձայնագրման «DVR» համակարգը, բակից գողացել են 1 հատ տեսանկարահանող սարքը, ինչպես նաեւ բանալիով դուռը բացելու միջոցով մուտք են գործել տուն, խառնել տան իրերը եւ գողացել 1 հատ մազ կտրելու էլեկտրական սարք:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ ըստ նախնական տեղեկությունների՝ տուժած Շաքար Ե.-ին պատճառվել է մոտ 900 հազար դրամի վնաս:Կասկածյալները ոստիկանության Տավուշի բաժնից ներկայացվել են Բերդի քննչական բաժին, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ ՔՐ օր-ի 254 հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4- րդ կետերի, 254 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորությամբ՝ փետրվարի 26-ին ամփոփվել են Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազության՝ 2023 թվականի աշխատանքները:

Դատախազությունից հայտնում են, որ վարչական շրջանի դատախազ Դավիթ Աղաջանյանը ներկայացրել է արձանագրված հանցավորության վիճակը, հանցագործությունների բացահայտման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Վարչական շրջանի դատախազը, մասնավորապես, նշել է, որ 2023 թվականի ընթացքում վարչական շրջաններում գրանցվել է հանցագործության 2635 դեպք (2022 թվականին՝ 2688 դեպք). դեպքերը նվազել են 53-ով կամ 2%-ով:

Դավիթ Աղաջանյանի խոսքով՝ չնայած հանցագործությունների ընդհանուր թվի նվազմանը՝ աճ է արձանագրվել միջին ծանրության, ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների թվաքանակում:

2023 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների 356 դեպք՝ 2022 թվականին արձանագրված 371 դեպքի դիմաց (նվազումը՝ 15 դեպքով կամ 4 %-ով):

2023 թվականի ընթացքում 169 դեպքով կամ 15%-ով նվազում է արձանագրվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվաքանակում (հաշվետու տարում արձանագրվել է 959 դեպք՝ 2022 թվականի 1128 դեպքի դիմաց):

Աճել են կողոպուտի դեպքերը. 2023 թվականին արձանագրվել է 15 դեպք, 2022 թվականին՝7 դեպք:

Պահպանվել է բնակարանային գողությունների դեպքերի նվազման միտումը. 2023 թվականին արձանագրվել է 75 դեպք՝2022 թվականի 83-ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների 64 դեպք՝2022 թվականի 80 դեպքի դիմաց. 16 դեպքով կամ 20%-ով դեպքերը նվազել են: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների թվում աճ է արձանագրվել 219 դեպքով (2023 թվականին՝ 322, 2022 թվականին՝103):

2023 թվականի ընթացքում դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 346 քրեական վարույթ՝399 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 197 քրեական գործ (վարույթ)՝241 անձի վերաբերյալ):

2023 թվականի ընթացքում ավարտվել է դատարաններում քննվող 229 քրեական գործի քննություն՝243 անձի վերաբերյալ:

2023 թվականին վարչական շրջանների դատախազության կողմից, ի թիվս այլնի, ուսումնասիրվել են Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող՝ «Տիգրան Մեծի անվան», «Նանսենի անվան» զբոսայգիներում ընդհանուր օգտագործման հողերի տարածքներում գործող հասարակական նշանակության օբյեկտներին տրամադրված հողերի եւ դրանցում կառուցված շինությունների օտարման գործընթացները: Կատարված ուսումնասիրությունների արդյունքներով դատախազը հանցանքի մասին հաղորդումներ է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե, նախաձեռնվել են քրեական վարույթներ:

ԱՊՕՐԻՆԻ ՋԵՆՔ

ՍԵՔՍՈՒԱԼ ԲՆՈՒՅԹԻ ԲՌՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

SHAMSHYAN.com-ը փետրվարի 15-ին լուր էր հրապարակել Վանաձորում համաշիրության աշխատակցի կողմից համաշիրության նախագահից խոշոր չափի գումար շորթելու մասին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, երեկ հայտնի դարձավ, որ նշված դեպքի փաստով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում պարզվել է նաեւ, որ այդ տղամարդը նաեւ սեքսուալ բնույթի բռնի գործողություն է կատարել:

Պարզվել է, որ նա Վանաձորում գտնվող համաշիրության գրասենյակում, սպանության սպառնալիքներ տալով, համաշիրության նախագահի կամքին հակառակ նրա հետ ունեցել է սեռական հարաբերություն:

Նշված արարքի մասին Լոռու մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ՀՀ քր. օր.-ի 198 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով:

Նշված անձի վերաբերյալ մեկ այլ քրեական վարույթ է նախաձեռնվել նաեւ ՀՀ քր. օր.-ի 254 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, որտեղ, ըստ օպերատիվ տեղեկությունների, այդ տղամարդը նշված համաշիրությունից գողացել է մոտ կես միլիոն դրամ արժողության շինարարական գործիքներ եւ շինանյութ:

Նախաքննության շահերից ելնելով՝ որոշ հանգամանքներ այս պահին չենք հրապարակում:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր SHAMSHYAN.com-ը, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տարոնի բաժնում շորթում կատարելու հատկանիշներով փաստաթղթեր էին կազմվել: Ոստիկանության Տարոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Վանաձոր քաղաքում գործող համաշիրություններից մեկի նախագահը կատարում է չարաշահումներ:

Մասնավորապես, աշխատակիցներին ցածր աշխատավարձ նշելով՝ բնակիչների կողմից վճարված գումարները չէր ծառայեցնում նպատակին, համաշիրության մատյաններում նշված գործիքները, որոնք ձեռք էր բերել համայնքի բնակիչների կողմից հավաքած գումարով համայնքում շինաշխատանքներ կատարելու նպատակով, գոյություն չունեին:

Նույն օրը քրեական հետախուզության բաժանմունքում օպերլիազորը լրացուցիչ օպերատիվ տեղեկություն էր ստացել, ապա հանցագործության հայտնաբերման եւ բացահայտման ուղղությամբ, ձեռնարկելով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, լրացուցիչ տեղեկություններ էր ստացել, որ այդ համաշիրության նախկին աշխատակիցը, օգտվելով նշված համաշիրության նախագահի հետ ինչ-ինչ հարաբերություններ ունենալու հանգամանքից, պարբերաբար սպառնացել էր նրան եւ վերջինից շորթել էր, ով էլ համաշիրության բնակիչների կողմից հավաքված եւ բնակիչների կարիքների համար նախատեսված մոտ 1 մլն 350 հազար դրամ գումարը «իրենով էր արել»:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝փետրվարի 23-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 180 դեպք, որից 11-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԱՎԵԼԻ ՔԱՆ 6 ՏԱՐԻ

Ոստիկանության Իջեւանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ, Գանձաքար գյուղի բնակիչ Գերասիմ Մարդանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2017թ. հոկտեմբերի 4-ին ոստիկանության Իջեւանի բաժնի շենքում խոշտանգել է Ժորա Սիմոնյանին: Նրա նկատմամբ քրեական գործ է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի 1-ին մասով («Խոշտանգումը»): Գ. Մարդանյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Գ. Մարդանյանը հարուցված մեղադրանքը համարում է շինծու՝ ասելով, որ Սիմոնյանների ընտանիքը զբաղվում է անտառում ծառերի ապօրինի հատումներով եւ դրանից ստացված վառելափայտի իրացմամբ, Ժ. Սիմոնյանը իր հանդեպ սուտ մատնություն է կատարել, քանզի ինքը ի պաշտոնե խանգարել է Սիմոնյան ընտանիքի կողմից ապօրինի ծառահատումներին: Սույն քրեական գործով դատավարությունը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Բերդի նստավայրում մեկնարկել է 2018թ. հունվարի 23-ին: 2019թ. փետրվարի 7-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ջոյա Զաքինյանը վճռել է Գ. Մարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի 1-ին մասով արդարացնել եւ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել, Գ. Մարդանյանի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը վերացնել: Ժ. Սիմոնյանի ներկայացուցիչ, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը եւ դատախազությունը այդ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել: Վերաքննիչ դատարանը 2020թ. մարտի 25-ին որոշել է վերաքննիչ բողոքները բավարարել մասնակի, առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանել եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության, Գ. Մարդանյանի նկատմամբ կիրառված «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը թողնել անփոփոխ, նրա նկատմամբ կիրառված պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը վերացնել: Վերաքննիչ դատարանի որոշման դեմ դատախազությունը, Գ. Մարդանյանի պաշտպան Ռոբերտ Ալիխանյանը, Ժ. Սիմոնյանի ներկայացուցիչ Ա. Ղարագյոզյանը վճռաբեկ բողոք են ներկայացրել: 2020թ. հուլիսի 15-ին վճռաբեկ դատարանը որոշել է ՀՀ վերաքննիչ դատարանի 2020 թվականի մարտի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանի, Գ. Մարդանյանի պաշտպան Ռ. Ալիխանյանի, Ժորա Սիմոնյանի ներկայացուցիչ Ա. Ղարագյոզյանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժել: Ներկայումս Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում դատավոր Սամվել Մարդանյանի նախագահությամբ ընթանում է Գ. Մարդանյանի դատավարությունը: Նա այժմ պաշտոնավարում է որպես ոստիկանության Բերդի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԶԻՆԱՊԱՀ»

88.2 ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

«ԶԻՆԱՊԱՀ» զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2024թ. հունվարի 18-ի նիստի որոշմամբ՝ հիմնադրամը վերանայել եւ ինդեքսավորել է իր շահառուների հատուցման ամսական վճարվող գումարը՝ բարձրացնելով այն 26%-ով 2024թ. հունվարի 1-ից:



Այս նախաձեռնության արդյունքում «ԶԻՆԱՊԱՀ»-ի տարեկան պարտավորություններն աճել են 4 միլիարդ ՀՀ դրամով:

«Հոգաբարձուների խորհուրդը եւ գործադիր թիմը ջանքեր չեն խնայում զարգացնելու հիմնադրամը եւ դարձնելու այն մի ինստիտուցիոնալ կառույց՝ արժանի մեր զինծառայողների նվիրվածությանն ու զոհաբերությանը: Ի նշան հարգանքի, գնահատանքի եւ ազգովի մեր երախտագիտության մեր շահառուներին, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերեցին մեր հայրենիքի համար, մենք պարտավորվում ենք անել հնարավորը մեր զինծառայողներին եւ նրանց ընտանիքներին սատար կանգնելու եւ բարեկեցիկ կյանք ապահովելու համար»,-նշում են հիմնադրամից:

Ինդեքսավորումը տարածվում է շահառուների միայն հատուցման ամսական վճարների եւ լրացուցիչ վճարների վրա: Միանվագ գումարը չի ինդեքսավորվում:

Օրինակ՝ եթե շահառուհի հատուցման ամսական գումարը 200,000 ՀՀ դրամ է, ապա ինդեքսավորման արդյունքում այն այսուհետ կկազմի 252,000 ՀՀ դրամ: Այս փուլում հատուցման գումարների բարձրացումը կտարածվի բոլոր ներկա եւ 2024թ. հունվարի 1-ից դիմող նոր շահառուների վրա, բացի 3-րդ խմբի զինհաշմանդամներին վճարվող դրամական աջակցության գումարներից եւ «Կամուրջ» ծրագրի շահառուներին վճարվող գումարներից:

«Սակայն առաջիկայում սպասվող օրենսդրական փոփոխություններից հետո ինդեքսավորումը կտարածվի նաեւ «ԶԻՆԱՊԱՀ»-ի՝ երբեւէ 1-ին կամ 2-րդ կարգի կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր սահմանափակման աստիճան ունեցող այն շահառուների վրա, ովքեր այս պահին 3-րդ խմբի զինհաշմանդամներ են: Փոփոխությունից հետո նրանք նույնպես կշարունակեն ստանալ իրենց հասանելիք հատուցվող ինդեքսավորված գումարները՝ անկախ կարգի կամ ֆունկցիոնալության աստիճանի փոփոխությունից:

Ինդեքսավորումը ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ից, սակայն վճարումները կիրականացվեն 2024թ. մարտի 1-ից: Այսպիսով, 2024թ. հունվար եւ փետրվար ամիսների հատուցման գումարները նույնպես ենթակա են ինդեքսավորման: 2024թ. մարտի 1-ին «ԶԻՆԱՊԱՀ»-ը կփոխանցի հունվար եւ փետրվար ամիսների ինդեքսավորման արդյունքում վերահաշվարկված գումարի տարբերությունը:

Այս փոփոխությամբ պայմանավորված՝ 2024թ. մարտից «ԶԻՆԱՊԱՀ»-ի շահառուների հատուցման ամսական վճարումները կկատարվեն միայն յուրաքանչյուր ամսվա 10-ին՝ ներկայիս 5-ի եւ 15-ի փոխարեն»,-բոլոր սպասվող փոփոխությունները պարզաբանում են հիմնադրամից:

«ԶԻՆԱՊԱՀ» Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամը ստեղծվել է 2017թ. հայրենիքի սահմաններում պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին եւ 1-ին ու 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության: «ԶԻՆԱՊԱՀ»-ը ապաքաղաքական կառույց է եւ գործում է՝ համաձայն ՀՀ օրենքի:

«ԶԻՆԱՊԱՀ»-ն աջակցում է 5,219 զինծառայողների եւ նրանց ընտանիքների՝ շուրջ 12,000 հայրենակիցներ, ում տրամադրվել է միանվագ 5 եւ 10 մլն ՀՀ դրամ, այնուհետեւ ամսական 100,000 -300,000 ՀՀ դրամ՝ ըստ սպայական կոչման, նրանց կայուն ֆինանսական բարօրությունը 20 տարի շարունակ ապահովելու նպատակով: 2017թ.-ից ի վեր «ԶԻՆԱՊԱՀ»-ը տրամադրել է ավելի քան 88.2 մլրդ ՀՀ դրամի հատուցում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

26 ՀԵԿՏԱՐ՝ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Երեւանի քաղաքապետարանի զորձակարգավարական խորհրդակցության ժամանակ քաղաքապետ Տիգրան Ավինյանին զեկուցվեց, որ մայրաքաղաքի Նոր Նորք վարչական շրջանում ուսումնասիրվել է շուրջ 50 հեկտար տարածք, որտեղ կան բազմաթիվ ինքնակամ շինություններ:

«Թեեւ 50 հեկտարից առնվազն 36 հեկտար տարածքը հանդիսանում է համայնքային սեփականություն եւ, ըստ մայրաքաղաքի գլխավոր հատակագծի, ներառված է կանաչապատման ենթակա տարածքների ցանկում, սակայն ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված 36 հեկտար տարածքում հայտնաբերվել են մի քանի տասնյակ ինքնակամ կառուցված շինություններ, այդ թվում՝ բնակելի տներ, հասարակական շինություններ, ավտոտնակներ եւ այլ օժանդակ շինություններ: Համայնքային տարածքի մի զգալի հատվածի 7 հեկտար մակերեսն ինքնակամորեն սահմանազատվել է ու ցանկապատվել քաղաքացիների կողմից»,- մանրամասնեց «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը: Ըստ նրա՝ 26 հեկտար տարածք պատրաստ է կանաչապատման: Նման մեծ տարածքի վրա քաղաքային անտառի հիմնումը խիստ դրական ազդեցություն է ունենալու ոչ միայն տվյալ հատվածի, այլեւ Կենտրոն վարչական շրջանի համար: Նախատեսվում է այդ տարածքում տեղադրել ոռոգման ցանց եւ ավարտին հասցնել սանիտարական աշխատանքները. «Խոսքը համայնքից զավթված հողերի մասին է: Նման քաղաքականության հետեւանքով մենք մայրաքաղաքում կորցրել ենք ահռելի ծավալի կանաչապատ տարածք, եւ տարբեր հիմնավորումներով ու արդարացումներով վերջ չի տրվել անկանոն կառուցապատմանը: Կանաչ տարածքներում քոլիկների ու շինությունների ապօրինի կառուցումն անընդունելի է»,- ասաց Ավինյանը, հասարակական կարգի պահպանման ծառայությանը, քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչությանն ու Նոր Նորքի վարչական շրջանի ղեկավարին հանձնարարեց ընթացիկ շաբաթվա ընթացքում 26 հեկտար տարածքում վերացնել ապօրինի շինությունները եւ քննարկման ներկայացնել կանաչապատման սխեման:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 25 պատահար. 1 մարդ զոհվել է, 35-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԳՈՎԱԶԴ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Դիանա Մաթեւոսյան Կարենի» ԱՁ-ի կողմից Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի վարչական տարածքում արդյունաբերական եւ խմելու- կենցաղային/շշալցում նպատակներով ստորերկրյա ջրային ռեսուրսից համապատասխանաբար՝ 0.42 լ/վ եւ 1?5 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից - 18:00-ն դիմել Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի մարտի 4-ին՝ ժամը 16:00 -ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է Թագուշ Կուրղինյանի կողմից Կոտայքի մարզի Արզնի համայնքի Արզնի գյուղի վարչական տարածքում գյուղատնտեսական /ոռոգում՝ 0.06 հա/ նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 0.31 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից- 18:00-ն դիմել Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի մարտի 4-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝Հասմիկ Վալերիի Երոյանս (Վազյան), ծնված 05.09.1977թ., սովորել եմ Հ. Լազարյանի անվան Արեւելագիտության ինստիտուտում 1994-1998 թթ.: Դիպլոմի համար՝ HB000066: Կորցրել եմ Նոր Նորք վարչական շրջանի Բ. Մուրադյանի փողոցին հարակից տարածքում սույն թվականի փետրվարի 3-ին՝ Ժամը 11:30-ի սահմաններում: Գտնողին խնդրում եմ զանգահարել տվյալ համարով՝055 09 24 64:

«ՀԱՍԱՆԵԼԻ ԴԻԼԻՋԱՆ»

ՎԻՐՏՈՒԱԼ ՍՈՒՐԴՈԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՄԲ

Զբոսաշրջային այցելավայրերի կառավարման «GoToDili» գրասենյակը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ եւ AR-trails-ի մասնակցությամբ, մեկնարկել է «Հասանելի Դիլիջան» ներառական նոր նախագիծը:

Այն նախատեսված է լսողության սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց, ինչպես նաեւ ամբողջովին խուլ/խուլ-համրերի համար:

«Հասանելի Դիլիջան»-ը նախագիծ է, որը թույլ է տալիս անցնել երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, օնլայն շրջայց-տուրեր Դիլիջանում, վիրտուալ սուրդոթարգմանիչների ուղեկցությամբ: Սա առաջին նմանատիպ ծրագիրն է Հայաստանում, որն օգնում է լսողության սահմանափակումներ ունեցող մարդկանց գնալ էքսկուրսիա կամ անցնել կարճ արշավային երթուղի առանց կողմնակի օգնության:

Երթուղիներից օգտվելու համար անհրաժեշտ է ներբեռնել AR-Trails հավելվածը, որտեղ հասանելի է երեք պրոդուկտ՝ քաղաքային էքսկուրսիա Դիլիջանում, քայլարշավ Ազգային պարկում եւ այցելություն վիրտուալ տեղեկատվական կենտրոն: Ծրագիրն ընտրելուց հետո հավելվածը ցույց է տալիս երթուղին, իսկ վիրտուալ սուրդոթարգմանիչները ծանոթացնում են օգտատերերին տեղանքի հետ:

Քաղաքային էքսկուրսիան կծանոթացնի օգտատերերին Դիլիջանի պատմության եւ հանրահայտ տեսարժան վայրերի հետ: Քայլարշավը կտանի դեպի Ազգային պարկի Թաքնված ջրվեժ՝ ընթացքում ծանոթացնելով կենդանական ու բուսական աշխարհի հետ:

AR-Trails հավելվածը թույլ է տալիս նաեւ այցելել վիրտուալ տեղեկատվական կենտրոն, որտեղ կարելի է գտնել Դիլիջանի մասին ընդհանրացված տեղեկատվություն: Ընդհանուր առմամբ, վիրտուալ էքսկուրսիաներն ընդգրկում են Դիլիջանի 15 վայրեր:

«Ճամփորդությունը պետք է հասանելի լինի յուրաքանչյուրին: Հայաստան այցելող յուրաքանչյուր զբոսաշրջիկ, անկախ ֆիզիկական կարողություններից, պետք է հնարավորություն ունենա ճանապարհորդել մեր երկրում, բացահայտել թաքնված ուղիները եւ հավասարապես զգալ բոլոր հետաքրքիր եւ անմոռանալի փորձառությունները: Այս համատեքստում Զբոսաշրջության կոմիտեն ողջունում է «Հասանելի Դիլիջան» զբոսաշրջային պրոդուկտի ստեղծումը, որը նոր հնարավորություն է անհատների համար բացահայտելու Հայաստանի զբոսաշրջային հրաշքները»,- կարեւորել է Հայաստանի Հանրապետության ԷՆ զբոսաշրջության կոմիտեի նախագահ Սիսիան Պողոսեանը:

GoToDili DMO-ի ղեկավար Անի Ավանեսովան ընդգծել է, որ «Հասանելի Դիլիջան» նախագծի նպատակն է Հայաստանում ներառական զբոսաշրջությունը հասցնել նոր, որակյալ մակարդակի:

«Պրոդուկտները, որոնք մշակված են հատուկ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար, ոչ միայն զգալի կերպով կբարելավվեն իրենց կյանքը, կտան նոր պայմաններ ծանոթանալու երկրի զբոսաշրջային տեղանքներին, բարենպաստորեն կաջակցեն սոցիալիզացիային, այլ նաեւ ընդհանուր առմամբ երկրին օգուտ կբերեն՝ դարձնելով այն ավելի գրավիչ զբոսաշրջիկների համար: GoToDili թիմը ուրախ է լինել այս կարեւոր ճանապարհի առաջամարտիկներից մեկը: Մենք անկեղծորեն հավատում ենք, որ կգա այն օրը, երբ Հայաստանը հնարավորինս հասանելի կդառնա բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ծանոթանալ նրա հետ»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 1-ին թաղամաս, 21/31 հասցեում գտնվող 0,21 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝84000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 1-ին թաղամաս, 21/32 հասցեում գտնվող 0,3 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝120000000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Պ. Սեւակի փողոց, 45 շենք, 6 հասցեում գտնվող 40,5 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 5600000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 14.03.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«Armenian sound»

ՁԱՅՆԱԴԱՐԱՆ՝ ԿՈԼՈՐԻՏԱՅԻՆ ՁԱՅՆԵՐՈՎ

«Armenian sound» բացառիկ ձայնադարանի շնորհիվ այսուհետ հնարավոր կլինի Հայաստանը ճանաչել ձայներով. ինչպե՞ս է հնչում հայկական դաստարագը հենց եկեղեցում կամ առավոտը Երեւանում ու գյուղերում: Բացառիկ ձայնադարանում ներառվել են նաեւ դաստմական դարձած մարզական ու խաղախական իրադարձությունները:

Ժամանակակից տեխնիկայով իրականացված գերմաքուր ձայնագրությունները կարող են օգտակար լինել ռադիոհաղորդումների, ֆիլմերի հնչյունավորման եւ հնչյունային ձեւավորումների համար:

Նախագծի համահեղինակ, ձայնային ռեժիսոր Արսեն Հակոբյանը նշեց, որ տարիների աշխատանքի արդյունքում հասկացել են, որ հայկական հնչյունային ռեժիսուրայում կան բացեր. չունենք հայկական ձայնադարան:

«Ձայնադարանում հավաքվում են մեզ շրջապատող կոլորիտային բոլոր ձայները, որոնք մեծ պահանջարկ ունեն ֆիլմերում, գովազդային հոլովակներում եւ այլն, որը մենք չունենք եւ այդպիսի այլընտրանք կարող ենք գտնել արտասահմանյան ձայնադարաններում: Սակայն, այս պարագայում էլ մի շարք խնդիրներ է առաջանում մեզ համար, քանի որ մենք ունենք սովորույթներ, մեծ ծիսակարգեր, որոնք, բնականաբար, այլ երկրների ձայնադարաններում չկան:

Օրինակ՝ վերցնենք Վարդավառը. եթե ինչ-որ մեկը որոշի ձմռանը հոլովակ պատրաստել, որտեղ պետք է այդ տոնն իր ողջ հմայքով ներկայացնել, ապա միայն վիզուալ մասը երաժշտությամբ ներկայացնելը դեռ բավական չէ, որովհետեւ ամբողջ էմոցիոնալ դաշտը, որը ձեւավորվում է Վարդավառի ընթացքում, պետք է հատուկ ձայների միջոցով փոխանցել ունկնդրին, իսկ դա մենք չունենք»,-նշեց Արսեն Հակոբյանը:

Նա ընդգծեց, որ բացը լրացնելու համար հայկական ձայնադարանի ստեղծման համար 2017 թվականից իրենք սկսել են գործուն քայլեր ձեռնարկել:

«Մեր ուժերով, մեր ընկերների օգնությամբ եւ արտասահմանյան գործընկերների հետ խորհրդակցելով՝ ձեռք բերեցինք անհրաժեշտ հատուկ տեխնիկան, որը թույլ կտա ձայնագրել ամեն ինչ, այդ թվում նաեւ բնության ամենատարբեր եւ հետաքրքիր ձայները»,-ասաց նա:

Նախագծի հեղինակներն ընդգծեցին, որ ձայնը համարվում է ֆիլմի, տարբեր հոլովակների եւ վիդեոնյութերի «ողնաշարը», քանի որ առողջ ու մաքուր ձայնը ֆիլմին տալիս է կենդանի շունչ:

Համահիմնադիր, ձայնային ռեժիսոր Տիգրան Հակոբյանն էլ նշեց, որ իրենք կենտրոնացել են նաեւ այնպիսի ձայների վրա, որոնք այլ ձայնադարաններում չեն գտնի:

«Մշակված ձայները կայքում տեղադրվելուց հետո դրանց ավելացվում է նկարագրություն եւ համապատասխան թեգեր, որն ավելի կհեշտացնի համապատասխան ձայնը գտնելը:

Այս պահին դեռ կայքում զետեղված է մեր ունեցած բազայի մոտ հինգ տոկոսը, բայց աշխատանքները շարունակվում են, այն պարբերաբար թարմացվում է եւ շուտով զգալի քանակով կավելանա»,-ասաց Տիգրան Հակոբյանը:

Նախագծի հեղինակները նշեցին, որ ձայնադարանից օգտվել կարող են բոլորը՝ ոչ միայն մասնագետները, այլեւ մարդիկ, ովքեր ոլորտի սիրահար են կամ գտնվում են Հայաստանից դուրս եւ պարզապես ուզում են ծանոթանալ միջավայրի կամ մշակութային ինչ-որ հատվածի հետ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 14 մարտի 2024 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝01.07.2024թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ՝ առաջին 30 փուլերը «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով:

Աճուրդի պայմաններն են.

- Լոտ՝ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն, Սարյան փողոց, 38 շենք, 60 հասցեում գտնվող 78,1 քմ բնակարան,
- Լոտի մեկնարկային գինը՝93000000 (ինսնսներեք միլիոն) ՀՀ դրամ,
- Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝Միջնորդավճար),
- Լոտը գրավադրված է:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,
- իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝+374 11 56 45 13

կայք՝www.llcbst.am, www.borsa.am

ՄԱՐՔԱԿԱՆ

ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՂԹՈՂ

Հայաստանի ձիասպորտի ֆեդերացիան ներկայացնող Մարիա Ալեքսանյանը գրավել է Մոսկվայի առաջնության առաջին հորիզոնականը:

Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում փետրվարի 25-ին կայացած ձիասպորտի Մոսկվայի առաջնությունում, հաղթահարելով 120 սմ արգելքը, Ալեքսանյանը դարձել է առաջնության բացարձակ հաղթող:

Մարիա Ալեքսանյանի մարզիչն Արթուր Բաղդասարյանն է: Շաբաթներ առաջ 16- ամյա Մարիա Ալեքսանյանը «Вьвам, Россия» ձիասպորտի ակումբի համառուսաստանյան ամանորյա մրցաշարում դարձել էր երրորդ մրցանակակիր, իսկ 2023-ի տարեսկզբին Մարիա Ալեքսանյանն Համառուսաստանյան ձիասպորտի մրցաշարում դարձել է երկրորդ մրցանակակիր՝ հաղթահարելով 100 սմ արգելքը:

ԵՐԿԲՈՐԴԸ

Հայաստանի կանանց շախմատի հավաքականի անդամ Լիլիթ Մկրտչյանը սկսել է պայքարը «Chess Ladies Graz 2024»-ում:

Փետրվարի 25-ից մարտի 3-ը Ավստրիայի Գրաց քաղաքում անցկացվում է «Chess Ladies Graz 2024» շախմատի միջազգային մրցաշարը՝ նվիրված ավստրիացի շախմատիստուհի Եվա Մոզերի հիշատակին: Մրցաշարն անցկացվում է շրջանային մրցակարգով՝10 շախմատիստուհի, 9 խաղափուլ: Մասնակիցների թվում է նաեւ հայ շախմատիստուհի Լիլիթ Մկրտչյանն, որը մրցաշարում երկրորդ ամենաբարձր վարկանիշ ունեցող մասնակիցն է:

Մեկնարկային տուրում Լիլիթ Մկրտչյանը ոչ-ոքի է ավարտել պարտիան Ավստրիայի ներկայացուցիչ Դենիս Շլոֆերի հետ:

ՀԵՇՏ ՉԻ ՀԱՄԱՐՈՒՄ

Հայաստանի բասկետբոլի հավաքականի անդամ Զարեհ Զարգարյանը Ալբանիայի դեմ տոնած հաղթանակը հեշտ չի համարում:

«Ալբանիան հասցրել էր տեսնել մեր խաղը, ծանոթ էր մեզ, եւ մեզ համար ամեն ինչ նրանց կողմից նորություն էր, բայց այս խաղում կարեւորը միասնական խաղն էր, որը մենք ցուցադրեցինք: Ավստրիայի դեմ արտագնա խաղում մրցակիցներն ավելի հանգիստ էին, սակայն Ավստրիան ֆիզիկապես առավել ուժեղ թիմ էր»,- լրագրողների հետ զրույցում ասաց Զարգարյանը:

Նրա խոսքով՝ խաղավարտին Հայաստանի հավաքականին հաջողվեց հաղթանակի հասնել զամբյուղից անդրադարձած գնդակներին տիրելու շնորհիվ:

«Թեպետ տարիքով եմ արդեն, սակայն երբ էլ Հայաստանը կանչի, միշտ գալու եմ: Ինձ համար այս մարզաշապիկը հագնելը ամենահպարտ պահերից է»,- շեշտեց նա:

Բասկետբոլի աշխարհի առաջնության ընտրական փուլի երկրորդ խաղում Հայաստանի հավաքականը Երեւանում ընդունեց Ալբանիային եւ առավելության հասավ 84:79 հաշվով: Հաջորդ հանդիպումը թիմը կանցկացնի նոյեմբերի 24-ին՝ Երեւանում ընդունելով Ավստրիային:

● *Մարտի 5-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա ««Զարթոնք». Պարույր Սեւակ - 100» գրական-երաժշտական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է փոխել սոցիալական փաթեթի հաշիվը: Խնդրում եմ ներկայացնել մանրամասն:

Իռա Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ յուրաքանչյուր բյուջետային տարվա սոցիալական փաթեթի գումարների փոխանցման համար լրացվում է նոր դիմում: Սոցիալական փաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը: Այս դեպքում աշխատողը դիմումի հետ միասին ներկայացնում է նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, ինչպես նաեւ սոցփաթեթի նախկին հաշիվը սպասարկող բանկից տեղեկանք՝ պարտավորություններ չունենալու վերաբերյալ:

Հայտնում ենք, որ սոցիալական փաթեթի հաշիվը փոխելու դեպքում աշխատողն իր հաշվի դրամական միջոցները սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկից սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկ փոխանցելու համար նախկին բանկ է ներկայացնում նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք: Այդ տեղեկանքի հիման վրա սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկն աշխատողի սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցում է սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկի սոցփաթեթի հաշվին:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել կամ փոխանցել ցանկացած ուղղություններով միայն աշխատողի կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու եւ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ կամ աշխատողի մահվան դեպքում ժառանգի կողմից սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու դեպքում:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Աղրանքներ եւ տրանսպորտային միջոցներ ներմուծելիս՝ հայտարարագրման ժամանակ, ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու դեպքում տուգանքի ի՞նչ չափ է սահմանված, եթե խախտումը առաջացնում է մաքսային վճարների պակաս հաշվարկում:

Հովհաննես Պողոսյան (50 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 203 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում, առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաեւ տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 212 հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները ենթակա են վերցման:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մարզիկ, աշխարհի ռեկորդակիր Սերգեյ Աղաջանյանը՝ Ռուսական Հալկ մականունով, համաշխարհային նոր ռեկորդ է սահմանել. նա հինգ րոպեում փչել եւ պայթեցրել է 14 բժշկական ջեռակ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-9 -14 0 + 5
Կոտայքի լեռներ	0 - 3 0 + 4
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 + 6 + 8
Գեղարքունիք	0 - 3 0 + 4
Լոռի	0 - 3 + 3 + 6
Տավուշ	- 1 + 2 + 4 + 7
Արագածոտնի լեռներ	0 - 3 0 + 3
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 4 + 6 + 10

Արարատ	+ 5 + 7 +10 + 12
Արմավիր	+ 4 + 6 +10 + 12
Վայոց ձորի լեռներ	0 - 3 + 1 + 4
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 7 + 9 + 12
Սյունիքի հովիտներ	+ 2 + 5 +7 + 11
Սյունիքի նախալեռներ	-7 - 11 0 + 4
ԼՂՀ	-5 - 10 0 + 3
Երեւան	0 - 2 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.2.2024**
Հասցեն՝ Գերաբերունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*